ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«08» 07 2025 թ. Թիվ 17Ա-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 173-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի հոկտեմբերի 5-ի «Գաղտնի քննչական գործողությունների, կապի օպերատորներին ներկայացվող տեղեկատվության պահանջի կատարման կազմակերպման կարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 116-Լ և 2021 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 149-Լ հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 173-Լ հրամանի N 1 հավելվածի 2-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. ՆԵՐՔԻՆ ԴԻՏՈՒՄ, ԱՐՏԱՔԻՆ ԴԻՏՈՒՄ ԵՎ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԽՈՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կոմիտեի կենտրոնական մարմնի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության, պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված

հանցագործությունների քննության գլխավոր վարչության, զինվորական քննչական գլխավոր վարչության, Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներում, մարզային քննչական վարչություններում և դրանց ստորաբաժանումներում գաղտնի քննչական գործողությունների վերաբերյալ հանձնարարություններն ու դատարանի որոշումները հետաքննության մարմին են ուղարկվում «գաղտնի» դրոշմագրով՝ ստորաբաժանման պետի կամ նրա տեղակալի ուղեկցական գրությամբ՝ գաղտնի գործավարությանը ներկայացվող պահանջների պահպանմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը հանձնարարվելու դեպքերի:

3. Կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումներում (բացառությամբ տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության, պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության) գաղտնի քննչական գործողությունների վերաբերյալ հանձնարարություններն ու դատարանի որոշումները տվյալ ստորաբաժանման պետի կամ նրա տեղակալի ուղեկցական գրությամբ ուղարկվում են հետաքննության մարմին Կոմիտեի առաջին բաժնի միջոցով՝ «գաղտնի» դրոշմագրով՝ գաղտնի գործավարությանը ներկայացվող պահանջների պահպանմամբ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը հանձնարարվելու դեպքերի:

3.1. Գաղտնի քննչական գործողությունները Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը հանձնարարվելու դեպքերում հանձնարարություններն ու դատարանի որոշումները՝ գաղտնի գործավարությանը ներկայացվող պահանջների պահպանմամբ ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի աշխատակազմի ղեկավարին հետևյալ կարգով.

1) Կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ստորաբաժանումներում՝ ոլորտը համակարգող տեղակալի ուղեկցական գրությամբ՝ Կոմիտեի առաջին բաժնի միջոցով.

2) Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության, տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության ստորաբաժանումներում՝ ոլորտը համակարգող տեղակալի ուղեկցական գրությամբ՝ անմիջականորեն.

3) Կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության ստորաբաժանումներում՝ տվյալ գլխավոր վարչության պետի ուղեկցական գրությամբ՝ անմիջականորեն.

4) Կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության ստորաբաժանումներում՝ տվյալ գլխավոր վարչության պետի ուղեկցական գրությամբ՝ Կոմիտեի առաջին բաժնի միջոցով.

5) Կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության ստորաբաժանումներում՝ տվյալ գլխավոր վարչության պետի ուղեկցական գրությամբ՝ Կոմիտեի առաջին բաժնի միջոցով.

6) Կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումներում, մարզային քննչական վարչություններում և դրանց ստորաբաժանումներում՝ Կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետի ուղեկցական գրությամբ՝ Կոմիտեի առաջին բաժնի միջոցով:»:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ